Հասցեատեր՝

«Գանձասար ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ gandzasarfc21@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06.11.2023թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան

Վարույթ՝	ԱԽ-083
Խախտում՝	1. «Գանձասար» թիմի ֆուտբոլիստ Օֆոեկե Չիբուիկե Էմմանուելի (44764) ոչ սպորտային վարքագիծ դրսևորելը, (Հավելված 1 Ա, 31-րդ կետ) 2. Խաղի ժամանակահատվածում ակումբի տնօրեն Վլադիկ Առաքելյանի կողմից մրցավարների կայացրած որոշումների նկատմամբ անհամաձայնության դրսևորումները (Հավելված 1 Ա, 31-րդ կետ) 3. Խաղի ժամանակահատվածում երկրպագուի կողմից մրցակից թիմի մարզչի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելը (Հավելված 1 Ա, 23-րդ կետ)
Առաջնություն՝	2023-2024 Հայաստանի Առաջին Խմբի Առաջնություն
Խաղ՝	«Նոա-2» - «Գանձասար», 25.10.2023թ. (2:3)

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Առաջնորդվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 22-րդ հոդվածի 1-ին կետով՝ «Գանձասար» թիմի ֆուտբոլիստ Օֆոեկե Չիբուիկե Էմմանուելի (44764) ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար վերջինիս որակազրկել 2 (երկու) խաղով և «Գանձասար ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով։ Որակազրկումը

տարածվում է 2023 թվականի հոկտեմբերի 25-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում)։

2. Առաջնորդվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 4-րդ հոդվածի 1-ին կետով և 19-րդ հոդվածի 4-րդ կետով՝ Վլադիկ Առաքելյանի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել մարզադաշտ մուտք գործելու արգելք՝ 2 (երկու) խաղով՝ սկսած 07.11.2023թ.-ից։
3. Առաջնորդվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 22-րդ հոդվածի 1-ին կետով և 19-րդ հոդվածի 4-րդ կետով՝ «Գանձասար ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով։

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։